Կրթության արագ ախտորոշում (RED) Հայաստան

This event is part of the EaP Eastern Partnership

Funded by the European Union

Հիմնական բացահայտումները և նախնական առաջարկությունները

Կրթության քաղաքականության աշխատաժողով,
Հոլիդեյ Ինն հյուրանոց, Երևան, հինգշաբթի, 30-ը հունվարի 2025

ԵՄ կողմից ֆինանսավորվող Աջակցություն կրթական բարեփոխումներին և հմտություններին (SER) Արևելյան գործընկերության երկրների համար

Եվրոպական կրթական հիմնադրամ (ԵԿՀ)

ETF Working together Learning for life
European Training Foundation

Ներածություն (1/3)՝ համատեքստը և նպատակը

Կրթության արագ ախտորոշումը (RED) ‘SER’ («Աջակցություն կրթական բարեփոխումներին և հմտություններին») տարածաշրջանային ծրագրի մաս է.

- իրականացվում է ԵԿՀ կողմից
- Եվրոպական հանձնաժողովի խնդրանքով և ֆինանսավորմամբ
- թիրախավորում է Արևելյան գործընկերության 5 երկիր
- Իրականացման շրջանը՝ 2024-26թթ., բյուջեն՝ 2.5 միլիոն եվրո

Նպատակները՝ բացահայտել **կրթության ոլորտի առավել վճռորոշ (‘red’ «կարմիր») մարտահրավերները** (հենասյուն 1, RED)՝

- **Տեղեկատվական հենք ապահովել ոլորտին տրամադրվող արտաքին աջակցության, քաղաքականության երկխոսության, ինչպես նաև ազգային քաղաքականության բարեփոխումների համար,**
- հստակեցնել ինստիտուցիոնալ կարողությունների բարելավման կարիքները (հենասյուն 2) և քաղաքականության ընդհանուր խնդիրները փորձի փոխանակման համար (հենասյուն 3)

Ներածություն (2/3)՝ RED մոդուլները

RED-ներդրում
Պլանավորում և կառավարում

Գրասենյակային հետազոտություն

Տվյալների հավաքում և վերլուծություն

Դաշտային խորհրդակցություններ

Բացահայտումների քննարկում և առաջարկությունների համատեղ մշակում

Հրապարակում

Հետագա աջակցություն նըստ պահանջի՝
ԳԵ ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում, քաղաքականության խորհրդատվություն ԵՄ պատվիրակության

RED-ի արդյունքները

RED Գործողությունների պլան
Երկրի ընդհանուր նկարագրություն

Խնդիրների ամփոփում
2 - 4 ամիս

Զեկույցի նախագիծ՝ առաջարկություններով
8 ամիս

Վերջնական զեկույց
12 ամիս

Ներածություն (3/3)՝ Հայաստանում իրականացման գործընթացը

- Բազմաոլորտ փորձագիտական թիմ՝ հիմնականում Թուրինում (ԵԿՀ մասնագետներ) և Երևանում (3+1 խորհրդատու)
- Համապարփակ գրասենյակային հետազոտություն **երկրորդային տվյալներ** հավաքելու նպատակով (ուսումնասիրվել է զգալի ծավալով գրականություն)
- ԿՏԱԿ-ից, ՀՎԿ-ից և միջազգային աղբյուրներից տվյալների հավաքում և վերլուծություն՝ լրացուցիչ **թվային տվյալներ** ձևավորելու նպատակով
- 2 դաշտային այցելություն (Կոտայք և Գեղարքունիք), 8 անհատական հարցազրույց և 5 ֆոկուս-խումբ **որակական տվյալներ** և բարելավման առաջարկություններ ձեռք բերելու և մասնակցային մոտեցում՝ որպես քաղաքականության արդյունավետ մշակման մոդել, կիրառելու նպատակով:
- Ֆոկուս-խմբերում ներգրավված շահակիցներ՝
  - Ուսուցիչներ (12)
  - Կրթական հաստատությունների տնօրեններ (15)
  - Մարզային կրթության վարչությունների ներկայացուցիչներ (4)
  - Բուհերի ներկայացուցիչներ (4)
  - Ուսուցիչների վերապատրաստման ծառայություններ մատուցողներ (7)

- **Բացահայտումները** խմբավորված են 3 գերակա թեմաների շուրջ՝ **անհավասարություններ**, **ֆինանսավորում**, **կառավարում**, և դրանցից բխեցված են առաջարկություններ, որոնք հնարավորինս առնչվում են ներկա Կրթության զարգացման ծրագրին:

ETF Working together Learning for life
European Training Foundation

THE EU AGENCY SUPPORTING COUNTRIES TO DEVELOP THROUGH LEARNING

Գլուխ 1.
RED-ի հիմնական բացահայտումները

Կրթական քաղաքականության համատեքստը

- **Ժողովրդագրական փոփոխությունները** պահանջում են կենտրոնանալ որակի, ներառականության և գրավչության վրա
- **Սոցիալ-տնտեսական մարտահրավերները** հանգեցնում են միջոցների անբավարարության
- **Աշխարհաքաղաքական անկայությունն** առավել ցայտուն է դարձնում դիմակայուն կրթական համակարգի անհրաժեշտությունը
- **Քաղաքականությունը** նպատակաուղղված է եվրոպական ուղենիշներին, սակայն իրականացումը բախվում է մարտահրավերների

Ժողովրդագրության դինամիկան՝ ըստ տարիքային խմբերի (աղբյուրը՝ ՀՎԿ)





ETF Working together Learning for life
European Training Foundation

Հայաստանի կրթական համարգը՝ համառոտ (թվային տվյալներով)

Ընդգրկվածությունն՝ ըստ մակարդակների



Աղբյուրները՝ UNESCO-ի Վիճ. Ինստիտուտ՝ տարրական և բարձրագույն կրթության համար, և ՀՎԿ՝ նախադպրոցականի համար

- **Տարրական և միջնակարգ կրթության ընդգրկվածության բարձր ցուցանիշներ՝** միջազգային նշաձողերի համեմատ (զգալի աճ ավագ դպրոցում)
- **Նախադպրոցական կրթության ընդգրկվածությունը դեռևս ցածր է** 12-ամյա պարտադիր կրթության համամետ
- **Բարձրագույն կրթության ընդգրկվածությունն շարունակաբար աճում է**

ՓԱՍՏԵՐ՝ հանրակրթությունը 2023 թվականին՝

- 1,352 պետական (and 47 ոչ պետական) դպրոց
- ~37,000 **ուսուցիչ** պետական դպրոցներում
  - նվազման միտում (2010թ.՝ ~ 40,000)
- ~ 413,000 **աշակերտ** պետական դպրոցներում
  - **աճի** միտում (2010թ.՝ ~ 365,000)

Աղբյուրը՝ ՀՎԿ

ETF Working together Learning for life
European Training Foundation

ETF Working together Learning for life

European Training Foundation

THE EU AGENCY SUPPORTING COUNTRIES TO DEVELOP THROUGH LEARNING

Անհավասարությունների վերլուծություն

Անհավասարություն որակի տեսանկյունից՝ դասավանդման և ուսումնառության պայմաններ

- **Մանկավարժական կազմը ծերանում է, թարմացման միտումները մտահոգիչ են**



- **Առկա է հատկապես՝ ԲՏՃՄ, արվեստ, օտար լեզուներ և ֆիզիկական դաստիարակություն առարկաների ուսուցիչների անբավարարություն, հատկապես գուղական վայրերում:**
- Ուսուցիչների **միջին ցածր աշխատավարձը՝ ազգային միջինից էապես ցածր**, բացասաբար է ազդում այդ մասնագիտության գրավչության վրա:
- Բացի այդ, 2022թ. ընդունված՝ բարձրագույն կրթություն և մանկավարժի որակավորում ունենալու պարտադիր պահանջը ուսուցիչների էլ ավելի մեծ պակասի ռիսկեր է ստեղծում:

Աղբյուրը՝ ԵԿՀ հաշվարկներ՝ ՀՎԿ տվյալների հիմքով

ETF Working together Learning for life
European Training Foundation

Անհավասարություն որակի տեսանկյունից՝ դասավանդման և ուսումնառության պայմաններ

Դպրոցների չափերը, ուսուցիչների պակասը և ֆինանսական միջոցների անբավարարությունը ստեղծում են **ուսումնառության պայմանների անհավասարություններ**.

- Աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը տատանվում է փոքր դպրոցներում 5-ից մինչև 18-ը՝ մեծերում (2022/23 թ.)



- Որոշ մարզերում դպրոցների գրեթե կեսը հիմնանորոգման կարիք ունեն



Աղբյուրը՝ ԵԿՀ հաշվարկներ՝ ՀԿԿ տվյալների հիմքով

ETF Working together Learning for life
European Training Foundation

Անհավասարություններ հասանելիության տեսանկյունից

Նախադպրոցական հաստատությունների հասանելիությունը, որը պարտադիր չէ, դառնում է անհավասար՝ **առաջարկի սահմանափակ լինելու պատճառով,** ինչը ցույց է տալիս **գյուղական և քաղաքային բնակավայրերի, ինչպես նաև տարբեր մարզերի միջև անհավասարությունը**

- Սահմանափակ հնարավորություններ. տեղերի պակաս՝ տվյալ տարիքի երեխաների թվի համեմատ.
  - պոտենցիալ պահանջարկի միայն 37%-ը (0-5 տարեկան),
  - կամ 3-5 տարեկան բնակչության 77%-ը
- 3-5 տարեկան բնակչության համեմատ սակավ տեղ ունեցող մարզերը, մոտ 100% զբաղվածության գործակից ունեցող մարզերն են (Երևան և Արագածոտն)



Աղբյուրը՝ ԵԿՀ հաշվարկներ՝ ՀՎԿ տվյալների հիմքով

Անհավասարություններ ուսումնառության մեջ

Անհավասարություն 9-րդ դասարանի ավարտական ցուցանիշներում և հետագա կրթության մեջ.

- **Մինչև 9-րդ դասարան, հանրակրթությունում ընդգրկվածությունը հավասար է թվում՝** այնուհետև առաջանում են անհավասարություններ.

9-րդ դասարանի ավարտական ցուցանիշները տատանվում են 75%-ից մինչև 92%



9-րդ դասարանի ավարտական գործակիցը՝ աղջիկների և տղաների համար



Աղբյուրը՝ ԵԿՀ հաշվարկներ՝ ՀՎԿ տվյալների հիմքով

Սեռային անհավասարություններն առկա են մարզային մակարդակում, ընդ որում՝ տարբեր մարզերում դրանք տարբեր կերպ են դրսևորվում:

European Training Foundation

Անհավասարություններ ուսումնառության մեջ

Անհավասարություն 9-րդ դասարանի ավարտական ցուցանիշներում և հետագա կրթության մեջ.

Կրթության ընդհատման զգալի մակարդակը չի կարող ամբողջությամբ բացատրվել աշակերտների անցմամբ մասնագիտական կրթության և ուսուցման համակարգ

12-րդ դասարանն ավարտելու գործակիցները տատանվում են 47%-ից մինչև 71%



Ընդհանուր ընդգրկվածության գործակիցներ. միջնակարգ կրթության և մասնագիտական կրթություն ու ուսուցում՝ ըստ մարզերի, 2023-2024 ուս. տարի



ETF Working together Learning for life
European Training Foundation

Աղբյուրը՝ ԵԿՀ հաշվարկներ՝ ՀՎԿ տվյալների հիմքով

Անհավասարություններ թվայնացման տեսանկյունից

- Մենթոր դպրոցների առաջարկը գործում է միայն գյուղական համայնքների համար, մինչդեռ ուսուցիչների մեծ պահանջարկ կա նաև Երևանում և մարզային այլ քաղաքներում:
- Դպրոցների հագեցվածությունը համակարգիչներով և ինտերնետի որակը դեռևս մարտահրավեր է առցանց կրթության համար:



(Աղբյուրը՝ ԿԿՏՀ-EMIS)



ETF Working together Learning for life
European Training Foundation

Անհավասարությունների վերլուծություն

Որակյալ կրթական ծառայությունների մատուցման մասով: ուսուցչի (և համակարգի) **տեսանկյունից**

- Ուսուցիչների համար EMIS-ի վրա հիմնված ինտենսիվ գործողությունների ներդրում՝ առանց դպրոցներում համապատասխան տեխնիկական ռեսուրսների բավարար առկայության և առանց հաշվի առնելու տարբեր տարիքային խմբերի ուսուցիչների ՏՀՏ գրագիտության կարիքները:

- Բոլոր տարիքային խմբերի և բոլոր առարկաների ուսուցիչների համար նույնքան խիստ մասնագիտական պահանջներ, մինչդեռ 6 առարկաների (աշխարհագրություն, բնական գիտություններ, կենսաբանություն, քիմիա, ֆիզիկա և ինֆորմատիկա) ուսուցիչները ստանում են 25% հավելավճար:

- Ուսուցիչների մեծամասնությունը, հատկապես հեռավոր գյուղական բնակավայրերից, ստիպված է մասնակցել իրենց մասնագիտական զարգացման դասընթացներին առցանց կամ հիբրիդային ռեժիմով, քանի որ սահմանափակ ֆինանսավորման պատճառով վերապատրաստման ծառայություն մատուցողները առկա ռեժիմով պարապմունքներ կազմակերպելու սահմանափակ կարողություններ ունեն:

Անհավասարությունների վերլուծություն
Որակյալ կրթական ծառայությունների մատուցման մասով: ուսուցչի (և համակարգի) տեսանկյունից

- Ուսուցչի և տնօրենի կողմից ուսուցչի մասնագիտական կարիքների երկաստիճան գնահատումը որոշակի իրավիճակներում կոռուպցիոն ռիսկեր է ստեղծում.

- Ատեստավորման 4-րդ մակարդակի համար հավակնություն ունեցող ուսուցիչները վերապատրաստման համար սահմանափակ ընտրություն ունեն **(ներկայումս երաշխավորված 24 կազմակերպություններից միայն 3-ն ունեն 4-րդ մակարդակի մոդուլներ)**

- Ուսուցիչների համար անվճար դասագրքերի տրամադրման հստակ ցուցված գործընթաց չկա

- Որոշ առարկաների և դասարանների ուսուցիչների համար իրենց այլ գործընկերների համեմատ դասապրոցեսի կազմակերպման համար առավել մեծ ջանք՝ առարկայական որոշ դասագրքերի ներկա բացակայության պատճառով

ETF Working together Learning for life

European Training Foundation

THE EU AGENCY SUPPORTING COUNTRIES TO DEVELOP THROUGH LEARNING

Ֆինանսական վերլուծություն

Ֆինանսական վերլուծություն՝ բյուջետային հարցեր

Կրթության ոլորտում պետական ծախսերի ցածր մակարդակ. չնայած վերջին տարիներին կրթության բյուջեի զգալի աճին, ոլորտում հանրային (պետական) ծախսերը մնում են միջազգային ցուցանիշներից ցածր.

- Առաջխաղացում կրթության բյուջեում (գրեթե կրկնապատկվել է 2020-ից 2024 թվականներին)
- 2024 թվականի ֆինանսական տարում կրթության բյուջեն կազմում է պետական բյուջեի 8.7%՝ մինչդեռ միջազգային չափանիշը 15-20% է
- 2023 թվականին կրթության բյուջեն կազմել է ՀՆԱ-ի 2.0%, մինչդեռ միջազգային չափանիշը 4-6% է

Բյուջեի ցածր կատարողականություն՝ 85%-ից ցածր



ETF Working together Learning for life
European Training Foundation

Ֆինանսական վերլուծություն՝ բյուջետային հարցեր

Բյուջետային հատկացումներ

- Բյուջեի բաշխումը կրթության տարբեր մակարդակների միջև. ամենամեծ պետական ծախսերը կատարվում են հանրակրթության ոլորտում, որը միջինում կազմում է կրթության բյուջեի 63%-ը, իսկ 2024 ֆինանսական տարում՝ 43%-ը:
- Կապիտալ ներդրումներն առաջնահերթություն են ստացել 2024 թվականի ֆինանսական տարում



Ֆինանսական վերլուծություն՝ ռեսուրսների բաշխումը դպրոցներին

- **Դպրոցների ֆինանսավորման բանաձևը ապահովում է հանրակրթության բյուջեի համահունչ բաշխումը՝ ըստ դասարանում սովորող աշակերտների թվի**

- **Ֆինանսավորման բանաձևի վերանայումը** պարտադրում է պահպանել դասարանների չափի, աշակերտ-ուսուցիչ հարաբերակցության նորմերն ու ստանդարտները, ուստի անհրաժեշտ է ունենալ տվյալներ դրանց վերահսկման համար

- Խնդիրներ ԿԿՏՀ (**EMIS) համակարգի կարողություններում՝ հանրակրթական հաստատությունների բարեփոխումների ֆինանսավորման համար**



ETF Working together Learning for life
European Training Foundation

Ֆինանսական վերլուծություն՝ կրթության քաղաքականության ծախսերը և ֆինանսավորումը

- ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրի ծախսերի գնահատումը առկա է, սակայն երաշխավորված ֆինանսավորման մակարդակի վերաբերյալ անորոշություն կա:

- ԿԳՄՍՆ զեկույցները՝ ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրի իրականացման վերաբերյալ չեն ներառում ֆինանսական հաշվետվություն, ինչը խոչընդոտում է արդյունավետ ֆինանսական վերլուծությունն ու բարեփոխումների պլանավորումը:

ETF Working together Learning for life

European Training Foundation

THE EU AGENCY SUPPORTING COUNTRIES TO DEVELOP THROUGH LEARNING

Կառավարման հարցերի վերլուծություն

Կառավարման հարցերի վերլուծություն

1. Պատասխանատվություն, հաշվետվողականություն, համակարգում

- Մարզային կրթական մարմինների սահմանափակ **ինքնավարություն** և (մարդկային) ռեսուրսներ
- Գործակալությունների գործունեության **համակարգման** և համատեղ **մշտադիտարկման** շրջանակների բացակայություն, ինչը ազդում է քաղաքականության արդյունավետ իրականացման և մշտադիտարկման վրա:
- Բազմաթիվ նոր միջամտությունների ներդրում, որոնք ցույց են տալիս **վերականգման և կարգաբերման ջանքեր**: Այնուամենայնիվ, **նախապատրաստական ժամանակը** հաճախ անբավարար է շահառուներին և իրականացնող գործընկերներին հասցեագրված պատշաճ և ժամանակին հաղորդակցման արշավների, ինչպես նաև նոր նախաձեռնությունների փորձարկման և գնահատման համար:
- Շահառուների համար դժվար է արդյունավետորեն գտնել իրավական փաստաթղթերը, ինչպես նաև առկա է հմտությունների պակաս դրանց հիերարխիան հասկանալու համար:

Կառավարման հարցերի վերլուծություն

2. Ռազմավարական տեսլական և գործընկերների, այդ թվում՝ դոնորների, դերը

- ԿԳՄՍՆ-ի ուժեղ առաջնորդություն՝ Կրթության զարգացման ծրագիրն այն միակ ազգային ռազմավարությունն է, որը ընդունվել է խորհրդարանի մակարդակում
- Արդիականացման և եվրոպական չափորոշիչներին համապատասխանեցման հանձնառություն՝ ԵՄ աջակցությամբ
- Շարունակական, **երբեմն համընկնող** աջակցություն դոնորների կողմից, ինչպիսիք են ԵՄ-ն, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը, Համաշխարհային բանկը, ԱՄՆ ՄԶԳ-ն, երկկողմ գործակալությունները, ինչպես նաև ուշադրություն արդյունավետ կառավարման բարեփոխումներին, սակայն (չափազա՞նց) մեծ ուշադրություն է դարձվում ենթակառուցվածքներին:

Կառավարման հարցերի վերլուծություն՝ կրթության համակարգի ինստիտուցիոնալ կառուցվածքը



Աղբյուրը՝ ԵԿՀ վիզուալիզացում՝ հիմնված օրենսդրության ուսումնասիրման վրա, 2024

Կառավարման հարցերի վերլուծություն

3. Գերակա/առանցքային բարեփոխումների կառավարում և իրականացում. զգոնություն պահանջող որոշ կետեր

Ուսուցչի մասնագիտության կառավարում

- **Ուսուցիչների պակասի խնդիր**. 10 տարում դպրոցներում ուսուցիչների թիվը 10,000-ով նվազել է, ընդ որում՝ 2023 թվականին նրանց 30%-ը 55 և ավելի տարեկան է եղել

VS

- **բարձր (աճող) պահանջներ** ուսուցչի մասնագիտություն մուտքի համար (որակավորումներ)



Աղբյուրը՝ ՀՎԿ

Կառավարման հարցերի վերլուծություն

4. Գերակա/առանցքային բարեփոխումների կառավարում և իրականացում

Դպրոցական ցանցեր

- **232 «փոքր չափի» դպրոցներ** շարունակում են ֆինանսավորվել «մեկ աշակերտի հաշվով» բանաձևով:
- Կրթական Համալիրների հեռանկարներ

Մասնագիտական կրթության և ուսուցման նոր օրենք

- Աշխատանքի վրա հմնված ուսումնառությունը ներդրված է
- Դուալ կրթության հնարավորություններն ընդլայնվել են
- Աշխատաշուկայի հմտությունների կարիքների վրա հիմնված հստակեցված կապի անհրաժեշտություն
- Մասնագիտական կրթության և ուսուցման բյուջեի բաժնի և մասնագիտությունների գրավչության հետ կապված խնդիրները շարունակում են պահպանվել:

Ակադեմիական քաղաք

- Մշակման փուլում մասնակցային և ներառական մոտեցման բացակայություն
- Վիճահարույց հարցեր և շահակիցների մտահոգություններ՝ սահուն իրականացման հնարավորության վերաբերյալ
- Մարզային համալսարանների շուրջ անորոշություն և հնարավոր հետևանքներ բարձրագույն կրթության ապագա տարածքային երկրապատկերի համար

ETF Working together Learning for life
European Training Foundation

Կառավարման հարցերի վերլուծություն

5. Տվյալների օգտագործում քաղաքականության շրջափուլի ողջ ընթացքում

Տվյալների հավաքագրման բացեր

- Ուսուցիչների թափուր աշխատատեղեր
- Գրանցման ցուցանիշները՝ ըստ մարզերի
- Նախադպրոցական ծառայություններ մատուցողները
- ԿԿՏՀ (EMIS)-ում ֆինանսական տվյալներ/հոսքեր ներմուծված չեն

Տվյալների կառավարման և օգտագործման խնդիրներ

- Չնայած շահակիցների համար EMIS տվյալների անհատականացված հասանելիությանը, ընդհանուր առմամբ ավելի լավ, սակայն դեռևս թույլ անկախ օգտագործում
- Տվյալների կենտրոնացված պատասխանատվության բացակայություն. տվյալները ցրված են տարբեր գործակալությունների միջև, իսկ տարբեր գործակալությունների տվյալների միջև կան անհամապատասխանություններ
- Թափանցիկ տվյալների վրա հիմնված որոշումների ընդունման համար հանրային հասանելիության խնդիր

6. Ինստիտուցիոնալ կարողություն

- **Ուսումնական հաստատությունների և դպրոցների դիմակայունություն և պատրաստվածություն**

Դպրոցի աղետների ռիսկերի կառավարման պլանը ներկայացված է Ներքին գործերի նախարարության Տարածաշրջանային փրկարարական ծառայությանը. անձնակազմի, աշակերտների և ծնողների իրազեկվածության ու հմտությունների ամրապնդման հարցը կարիք ունի հետագա

ETF Working together Learning for life

European Training Foundation

THE EU AGENCY SUPPORTING COUNTRIES TO DEVELOP THROUGH LEARNING

Գլուխ 2.
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ոլորտ 1. Բարեփոխումների կառավարում և համակարգում (1/3)

1.1. Ռազմավարական պլանավորում և բարեփոխումների մշտադիտարկում			
Նպատակ. *Բարձրացնել գործողությունների ծրագրի՝ որպես 2030 թվականի պետական կրթական ծրագրի իրականացման համապարփակ ճանապարհային քարտեզի արդյունավետությունը*			
Գործողություն	**Կարճաժամկետ**	**Միջնաժամկետ**	**Երկարաժամկետ**
✓ Ձևափոխել գործողությունների պլանի ձևանմուշն ու վերանայման գործընթացը՝ հնարավորություն տալով այս փաստաթուղթը օգտագործել որպես գործառնական փաստաթուղթ, որը կուղղորդի բարեփոխումների իրականացումը և կաջակցի առաջընթացի մոնիտորինգին և գնահատմանը ✓ Փաստաթղթում ավելացնել նոր բաժին՝ ծրագրի կառավարման վերաբերյալ ✓ Ստեղծել առցանց հաշվետվության գործիք և պատրաստել հաշվետվության ձևանմուշ գործողությունների ծրագրի համար՝ տարեկան համատեղ ոլորտային վերանայումների ընթացքում լրացման և տարածման նպատակով	X		
✓ Կազմակերպել տարբեր և փոխլրացնող բնույթների հանդիպումներ՝ գործողությունների ծրագրի շուրջ	X	X	X
✓ Ձևավորել շահագրգիռ կողմերի և շահառուների հետ պարբերական հետադարձ կապի մեխանիզմներ		X	

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ոլորտ 1. Բարեփոխումների կառավարում և համակարգում (2/3)

1.2. Ինստիտուցիոնալ հզորացում			
Նպատակ. *Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և նրա լիազոր մարմինների ինստիտուցիոնալ շրջանակը օպտիմալացում*			
Գործողություն	**Կարճաժամկետ**	**Միջնաժամկետ**	**Երկարաժամկետ**
✓ Ուսումնասիրել ԿԳՄՍՆ որոշ վարչությունների և ԿԳՄՍՆ լիազոր կառույցների առաքելությունների կամ դիրքավորման դաշտը և հնարավորությունները՝ համեմատաբար հրատապ բարելավումների համար	X		
✓ Իրականացնել ԿԳՄՍՆ և նրա լիազոր կառույցների համապարփակ կազմակերպական աուդիտ (կամ ինստիտուցիոնալ վերանայում), այդ թվում՝ մարզային մակարդակում		X	

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ոլորտ 1. Բարեփոխումների կառավարում և համակարգում (3/3)

1.3. Մասնակցային կառավարում			
***Նպատակ**. Բարձրացնել կրթական քաղաքականության համապատասխանությունն ու ընդունելիությունը՝ քաղաքականության մշակմանն ավելի մասնակցային մոտեցման միջոցով*			
Գործողություն	**Կարճաժամկետ**	**Միջնաժամկետ**	**Երկարաժամկետ**
✓ Կարգավորել օրենքով նախատեսված հանրային խորհրդակցությունների ժամկետները՝ ապահովելով բավարար ժամանակ օգտակար առաջարկների համար, և հետագա փուլում տարածել (անանուն) տեղեկատվություն հավաքագրված հետադարձ կապի վերաբերյալ ✓ Կազմակերպել բաց քննարկում կրթական համակարգի հիմնական շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների հետ՝ քաղաքական երկխոսության առկա մեխանիզմների վերաբերյալ և հավաքել բարելավման առաջարկներ՝ կապված հաղորդակցման ուղիների, պարբերականության և ցանկալի բովանդակության հետ՝ երկկողմանի արդյունավետ կապ ապահովելու համար	X		
✓ Ստեղծել մեխանիզմ կամ առցանց գործիք՝ առաջարկների, առկա խնդիրների և քաղված դասերի պարբերաբար հավաքագրման համար		X	

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ոլորտ 2. Կրթության ֆինանսավորում (1/3)

2.1. Պետական ֆինանսների կառավարումը			
Նպատակ. *Բարելավել հանրային միջոցների օգտագործման արդյունավետությունը*			
Գործողություն	**Կարճաժամկետ**	**Միջնաժամկետ**	**Երկարաժամկետ**
✓ Իրականացնել նախորդ տարիների թերծախսման և տարվա ընթացքում բյուջեի վերանայումների վերլուծություն	X		
✓ Բարձրացնել համապատասխան շահագրգիռ կողմերի կարողությունները EMIS-ը օգտագործելու որպես բյուջեի կազմման և ֆինանսական հաշվետվության հիմնական հիմք (և անհրաժեշտության դեպքում թարմացնել EMIS-ի դաշտերը)		X	

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ոլորտ 2. Կրթության ֆինանսավորում (2/3)

2.2. Կրթական քաղաքականության ֆինանսավորում			
Նպատակ. *Բարելավել կապը կրթական հանրային քաղաքականության և կրթական բյուջեի միջև*			
Գործողություն	**Կարճաժ ամկետ**	**Միջնաժ ամկետ**	**Երկար աժամկ ետ**
✓ Բարելավել ԿԳՄՍՆ-ում Ռազմավարական պլանավորման և մոնիտորինգի վարչության, ֆինանսաբյուջետային վարչության և ոլորտային վարչությունների միջև համագործակցության կարգավորումները ✓ Կրթության ռազմավարական ծրագրի իրականացման վերաբերյալ ԿԳՄՍՆ պարբերական հաշվետվությունների մեջ ներդնել ֆինանսական հաշվետվության բաղադրիչ	X		
✓ Ապահովել համապատասխան մակարդակի ֆինանսավորում՝ նոր քաղաքականությունների/միջոցառումների լավ կազմակերպված պիլոտավորման և դրանց պատշաճ գնահատման համար: ✓ Ապահովել քաղաքականության փոքրածավալ պիլոտային ծրագրերի արդյունքների կայունությունը ազգային մասշտաբով դրանց ընդլայնման ընթացքում		X	

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ոլորտ 2. Կրթության ֆինանսավորում (3/3)

2.2. Կրթական քաղաքականության ֆինանսավորում			
***Նպատակ**. Ընդլայնել և բազամազանացնել հանրային կրթական համակարգի ֆինանսավորման աղբյուրները՝ խթանելով սփյուռքի, մասնավոր ընկերությունների ներդրումները և դպրոցների կողմից եկամուտ ստեղծող գործունեությունը*			
Գործողություն	**Կարճա-ժամկետ**	**Միջնա-ժամկետ**	**Երկարա-ժամկետ**
✓ Խթանել մասնավոր հատվածի ներդրումները	X		
✓ Վերանայել դպրոցների կողմից եկամուտ ստեղծող գործունեության վերաբերյալ օրենսդրությունը ✓ Ստեղծել խթաններ սփյուռքի ներդրումների համար		X	
✓ Ստեղծել թափանցիկ, կառավարության կողմից հաստատված «Սփյուռքի կրթության հիմնադրամ»			X

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ոլորտ 3. Կառուցվածքային և իրավական տվյալների օգտագործում կրթական համակարգի արդյունավետ կառավարման համար

3.1. Տվյալների կառավարում			
Նպատակ. *Ապահովել կրթական քաղաքականության համապարփակ, ճշգրիտ տվյալների վրա հիմնված նախագծում և իրականացում*			
Գործողություն	**Կարճաժ ամկետ**	**Միջնաժ ամկետ**	**Երկարաժ ամկետ**
✓ Ստեղծել EMIS-ում բացակայող կամ ավելորդ տվյալների (ներառյալ ֆինանսավորման տվյալների) սպառիչ ցուցակ՝ դրանք կապելով դրանց նպատակային, ակնկալվող օգտագործման հետ ✓ Վերանայել ամբողջ կրթական տվյալների ցիկլը՝ հավաքումից մինչև օգտագործում	X		
✓ Մշակել տվյալների օգտագործման կարողությունների զարգացման ծրագիր տարբեր դերակատարների համար, փնտրել ռեսուրսներ, և իրականացնել այն		X	
✓ Նպաստել շահագրգիռ կողմերի և շահառուների «իրավական գրագիտությանը» կրթական համակարգում՝ մշակելով և թարմացնելով ԿԳՄՄՆ կայքում իրավական փաստաթղթերի օգտագործման համար հարմար հանրային պահեստավորում՝ ներառյալ որոնման համակարգ հիմնաբառերով:		X	

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ըստ կրթության ոլորտի (1/3)

Նախադպրոցական կրթություն			
Նպատակ. *Ավելացնել նախադպրոցական կրթության հնարավորությունները, հատկապես գյուղական տարածքներում, առաջարկելով նախադպրոցական հաստատությունների համար այլընտրանքային կառավարման մոդելներ:*			
Գործողություն	**Կարճաժամկետ**	**Միջնաժամկետ**	**Երկարաժամկետ**
✓ Նախադպրոցական կառավարման տարբեր մոդելների մշակում	Զարգացնել՝ Մարտ 2025 – Մարտ 2026	Պիլոտային ծրագրի իրականա-գում՝ սեպտեմբեր 2026	
Նպատակ. *Օգտագործել նախադպրոցական կրթության ներուժը անհավասարությունների հարթեցման (նպաստելու) համար՝ առաջնահերթություն տալով խոցելի խմբերի երեխաների հասանելիությանը*			
Գործողություն			
✓ Քննարկել, սահմանել և հրապարակել երեխաների խոցելիության հետ կապված թափանցիկ ընտրության չափանիշներ ✓ Յուրաքանչյուր դպրոցում սպասման ցուցակներ կազմել ✓ Համապատասխանեցնել EMIS դաշտերը	Գործադրել՝ Սեպտեմբեր 2025		

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ըստ կրթության ոլորտի (2/3)

Հանրակրթական ոլորտ			
Նպատակ. *Բարձրացնել դպրոցների ցանցի արդյունավետությունը*			
Գործողություն	**Կարճաժ ամկետ**	**Միջնաժ ամկետ**	**Երկարաժ ամկետ**
✓ Օպտիմալացնել շենքերի օգտագործումը՝ միավորելով տարբեր կրթական առաջարկները կամ ռացիոնալացնել օգտագործվող շենքերի քանակը:			X
Մասնագիտական կրթության և ուսուցման համակարգ			
Նպատակ. *Բարելավել մասնագիտական կրթության և ուսուցման համակարգը՝ համապատասխանեցնելով աշխատաշուկայի քանակական և որակական հմտությունների կարիքների հետ*			
Գործողություն	**Կարճաժ ամկետ**	**Միջնաժ ամկետ**	**Երկարաժ ամկետ**
✓ Վերահսկել ոլորտային հանձնաժողովների ընթացիկ ֆունկցիոնալությունը և ուսումնասիրել հնարավորությունները դրանք վերափոխելու ավելի ակտիվ սեկտորային հմտությունների խորհուրդների	X		
✓ Կարգավորել տեղերի նորմերը ըստ մասնագիտությունների		X	
✓ Իրականացնել հետևողական ուսումնասիրություններ		X	X

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ըստ կրթության ոլորտի (3/3)

Ոչ ֆորմալ կրթություն			
Նպատակ. *Պաշտոնապես ձևակերպել ոչ ֆորմալ կրթության և ֆորմալ կրթական համակարգերի միջև կապերը*			
Գործողություն	**Կարճաժամկետ**	**Միջնաժամկետ**	**Երկարաժամկետ**
✓ Մշակել ազգային չափանիշների, ուսումնական արդյունքների և կրեդիտների շրջանակ ոչ ֆորմալ կրթական գործունեությունների համար, որը կհամապատասխանի ֆորմալ ուսուցմանը: ✓ Ուսումնասիրել տարածքների համատեղ օգտագործումը		X	
Սփյուռք			
Նպատակ. *Ընդլայնել հանրային կրթական համակարգի ֆինանսավորման աղբյուրները՝ ստեղծելով մեխանիզմներ՝ սփյուռքի ուղարկած գումարները ուղղակիորեն փոխանցելու կրթական նախաձեռնություններին (հավելելով մոբիլիզացման բաղադրիչ սփյուռքի ռազմավարական մոտեցմանը)*			
Գործողություն	**Կարճաժամկետ**	**Միջնաժամկետ**	**Երկարաժամկետ**
✓ Ստեղծել խթաններ սփյուռքի ներդրումների համար		X	
✓ Ուսումնասիրել թափանցիկ, կառավարության կողմից հաստատված «Սփյուռքի կրթության հիմնադրամ» ստեղծելու հնարավորությունը			X

ETF Working together for Learning for life
European Training Foundation

Մաս 2 – Քննարկման ժամանակ (ըստ սեղանների)

1. **ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ. Ո՞ր RED բացահայտումն է ըստ Ձեզ ամենակարևորը և ո՞րին պետք է առաջնահերթություն տրվի: 10’**

> Ընտրեք 1-ը (ամեն սեղան) հետագա քննարկման համար

2. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՍՏԱՑՈՒՄ: Արդյո՞ք այս բացահայտումը բավականաչափ փաստագրված է/լավ ֆիքսված է: Եթե ոչ, ի՞նչ տեղեկատվություն/տվյալներ կցանկանայիք ավելացնել:

3. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՍՏԵՂԾՈՒՄ.

1/ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆԱՑՈՒՄ / Ըստ Ձեզ, արդյոք տեղի՞ն են այս խնդրին արձագանքելու համար կատարված առաջարկությունները: Ի՞նչ խորհուրդ կտաք դրանք ավելի արդյունավետ գործարկելու համար: Խնդրում ենք կենտրոնանալ...

Ո՞Վ պետք է ստանձնի տվյալ գործողության ղեկավարումը / ո՞վ պետք է ներգրավված լինի
Ո՞Ր առաջադրանքները պետք է առաջնահերթային լինեն
ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ, որոնք պետք է բավարարվեն գործը սկսելուց առաջ

2/ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ / Արդյո՞ք RED-ը բաց է թողել որևէ կարևոր առաջարկ, որը կցանկանայիք առաջարկել վերջնական զեկույցի համար (խնդրում ենք ներկայացնել հնարավորինս կոնկրետ ձևակերպմամբ):

4. ԽՄԲԱԿԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՁԵԿՈՒՅՑՈՒՄ

ETF Working together Learning for life
European Training Foundation

RED հետազոտության զեկույցի վերջնականացմանն ուղղված հաջորդ քայլերը

Մինչև 2025 թվականի փետրվարի 15-ը

> Մեկնաբանությունները և առաջարկությունները RED զեկույցի վերաբերյալ պետք է ուղարկվեն ETF-ին՝ vita.Glushko.ext@etf.Europa.eu էլեկտրոնային հասցեին

Մինչև Մարտ ամսվա վերջ

> *Վերջնական RED զեկույցը պատրաստ է թարգմանության և հրապարակման*

> *Զեկույցի հետագա տարածման հնարավորությունները (առցանց հարթակներ և/կամ միջոցառումներ/հանդիպումներ) պետք է սահմանվեն ԿԳՄՄՆ կողմից*